

ԱՆԴԱՎԹՅԱՆ



ԿՈՐԱԾ  
ՈՒՐԲԱԹԸ

ՊԵՏԿՐԱՏ

891.991  
7 93



30 MAY 2011

891.99.0

7-93

այ.

ԱՂ. ԴԱՎԹՅԱՆ

# ԿՈՐԱԾ ՈՒՐՐԱԹԸ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

(ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈՒՄ)

Նկարներ  
Գ. ԳՅՈԿԶԱԿՅԱՆԻ

Հորս

Z U S M E S Z P U S  
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1940



Պատ. խմբագիր՝ Հ. Հայրապետյան  
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

Аг. ДАВТЯН  
ПОТЕРЯННАЯ ПЯТНИЦА  
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.



1551  
46

Գրավիտի լիազոր՝ Բ-1054 Հրատ. 5146.  
Պատվեր 87. Տիրաժ 4000.  
Քուղթ 62x94. Տպագրական 1<sup>1/2</sup> մամ.  
Հանձնված է արտագրության 21 հունվարի 1940 թ.  
Ստորագրված է տպագր. համար 25 փետրվարի 1940 թ.  
Խղիտ հրատի I տպարան, Յերեվան, Լենինի փ. 65.



Մեզանից առաջ մի հեռու գյուղում  
Մի հռչակավոր քյոխվա ե լինում:  
Հայտնի յեր նաև գյուղի քահանան,  
«Սուրբ» եջմիածնում գիտեյին նրան:

Գյուղում կար նաև մի հին վարժապետ՝  
Վաղուց հռչակված մեծ ամենագետ:  
Եղ հայտնի քյոխվան մի լավ առավոտ  
Արթնացավ, կանչեց կնոջը իր մոտ:

— Ասա ինձ, կնիկ, եսոր ինչ որ ե,  
Վոր ունի եսպես սիրուն առավոտ:  
Տեսնո՞ւմ ես, կնիկ՝ արեք նոր ե,  
Ոգն ել ճերմակ ե և անուշահոտ...

— Ինչպե՞ս չեմ տեսնում, անգին ամուսին,  
Միտք եյի անում յես հենց եղ մասին,  
Եսոր անպայման շարաթ կլինի,  
Ել վճր որն եսքան սիրուն տեսք ունի...

— Ինչե՞ր ես ասում, այ կնիկ, չե՞ վոր  
Ուրբաթի գալու հերթն ե հենց եսոր.



Յերեկ հինգշաբթի, իսկ եսոր շաբաթ,  
Ուրբաթը չկա... Ո՞ւր ես, խեղճ ուրբաթ:

Յե՛վ միտք անելով քյոխվան հագնվեց,  
Անվա, սոված տնից դուրս վագեց:  
— Դու ել հետս յեկ, — ասաց զգիրին,  
Ինչպես թագավորն իրա վեզիրին:

Նրանք գնացին քահանայի տուն  
Հրավիրեցին խորհրդակցություն:  
— Տեր հայր, մի շատ վատ բան է պատահել,  
Բայց հարկավոր է դեռ գաղտնի պահել:


— Ի՞նչ է պատահել, վատ բան, ասացիք,  
Դե, սիրտս ճաքեց, ասեք, այ մարդիկ...  
— Այո, սուրբ տեր հայր, չտեսնված մի բան.  
Ուրբաթը չկա, — շնչաց քյոխվան...

— Ուրբաթը չկա, եղ վո՞նց իմացար, —  
Գոչեց տերտերը խիստ սարսափահար:  
— Հինգշաբթուց հետո յեկավ շաբաթ որ,  
Ել դրա համար կասկած կլինի՞ վոր:

— Իսկ վոր շատ վատն է քո բերած լուրը.  
Ո՞ւր կորած կլինի եղ անաբուուր:  
Յե՛վ միտք անելով մորուքը բռնեց  
Ու շիւ աչքերը գեանին սեփեռեց:

— Չգիտեմ, տեր հայր, հիմա ինչ անենք,  
Առանց ուրբաթի մենք ինչպես ապրենք...  
— Դու ճիշտ ես ասում, պետք է վորոնել  
Գուցե հաջողվի ուրբաթը գտնել:

— Գզիր, շուտ գնա, կանչիր Նշանին,  
Հարկավոր է շուտ կպչել ես բանին,





Ասաց քահանան ու գզիր Պեարն  
Վազեց կանչելու ամենազեռին:

— Վարժապետ, շտապ կանչում ե քյոխվան,  
Յերեխաներին թող վոր տուն գնան:  
Խայտառակութուն՝ ուրբաթն ե կորել,  
Քանի զեռ շուտ ե, պետք ե վորոնել:

Ու հավաքվեցին գզիրն ու քյոխվան,  
Խելոք տերտերն ու վարժապետն են,  
Հետները առան խաչ, ավետարան,  
Իսկույն գնացին ուրբաթը գտնեն...

Նրանք գնացին անտառը մտան,  
Ման յեկան թավուտ ծմակները վողջ,  
Յեվ հանկարծ ենտեղ մի մեծ արջ տեսան,  
Վոր փախավ մտավ մի մոտիկ խոր վորջ:

— Ահա ուրբաթը, — գոռաց քահանան,  
Ու փեշով ծածկեց վորջի բերանը:  
Դուք ինձ պահեցեք յես հանեմ նրան,  
Ինձ տվեք խաչն ու ավետարանը:

Քյոխվան, գզիրը և վարժապետը  
Ամուր բռնեցին նրա վոտներից,  
Յեվ սուրբ քահանան սուրբ գիրքը հետը  
Ներս սողաց մթին վորջի բերանից:

Քիչ հետո խոսեց ուրբաթի բնում.  
— Այ դու նգովյալ, վհնց ես հանդգնում.  
Յեվ ապա գոռաց, — Քաշեցեք, կերանվ,  
Իմ սրբությունը վոտնատակ արավ...

Քյոխվան, գզիրը և վարժապետը  
Ուժով քաշեցին, քաշեցին յերկար,





226  
Նրան դուրս բերին սուրբ գիրքը հետը,  
Համա տերտերի գլուխը չկար...

Նրանք զարմացած նայեցին իրար:  
— Այ տղա, Պետի, պատասխան տուր ինձ.  
Ես որ տերտերի ուսին գլուխ կամր,  
Թե՞ առավոտյան չբերեց տնից...

— Քյոխվա, տերտերը մեզ հետ եր ես որ,  
Համա գլուխը չեմ տեսել, ճիշտ վոր:  
— Իսկ դ՞ու, վարժապետ, տեսն՞լ ես, թե՞ չե:  
— Ինչ ասեմ, քյոխվա, դա շատ բարդ հարց ե...

Յեվ վորոշեցին վերադառնալ տուն  
Ու հարցում անել տերտերի կնկան:  
Մի արտում տեսան հնձվոր գյուղացուն,  
Ու քյոխվան հպարտ հարցրեց նրան:

— Լսիր, այ մշակ, դու, վորպես հնձվոր,  
Չես կարող ասել, ինչ որ ե ես որ:  
— Ուրբաթ ե, — ասաց հնձվոր գյուղացին:  
Յեվ անցորդները բարձր գուռացին.

— Գտանք ուրբաթը, ուրբաթը գտանք:  
Լսիր իմաստուն, քեզ մի հարց ել տանք.  
Յերկար մտածիր ու ճիշտ ասա մեզ,  
Դու մեր տերտերին գլխով տեսն՞լ ես...

Հնձվորը տեսավ վոր իրա դիմաց  
Ովքեր են կանգնած, ծաղրանքով ասաց.  
— Յեթե ուզում եք պատասխանը ճիշտ՝  
Քյոխվա ու տերտեր անգլուխ են միշտ...



«Ազգային գրադարան»



NL0399433



8113

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

✓

Ա. ԴԱՎՅԱՆ  
**ПОТЕРЯННАЯ ПЯТНИЦА**  
Գիշ Արմ. ՍՍՐ, Երևան, 1940 թ.